Հավելված 1

Արենի համայնքի ավագանու

02.02.2021թ.-ի թիվ 018 որոշման

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՁՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. Զորահավաքային մարմնի ղեկավար՝ Արենի համայնքի ղեկավարի տեղակալ,
2. Զորահավաքային մարմնի ղեկավարի տեղակալ՝ Արենի համայնքի ղեկավարի տեղակալ,
3. Զորահավաքային մարմնի քարտուղար՝ Արենիի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ (ծածկագիրը՝ 3.1-4)

Զորահավաքային մարմնի անդամներ՝

4. Ագարակաձոր բնակավայրի վարչական ղեկավար,
5. Աղավնաձոր բնակավայրի վարչական ղեկավար,
6. Արփի բնակավայրի վարչական ղեկավար,
7. Գնիշիկ բնակավայրի վարչական ղեկավար,
8. Ելփին բնակավայրի վարչական ղեկավար,
9. Խաչիկ բնակավայրի վարչական ղեկավար,
10. Չիվա բնակավայրի վարչական ղեկավար,
11. Ռինդ բնակավայրի վարչական ղեկավար:

Աշխատակազմի քարտուղար՝ ԳԵՎՈՐԳ ՍԻՄՈՆՅԱՆ

Հավելված 2
Արենի համայնքի ավագանու
02.02.2021 թ.-ի թիվ 018 որոշման

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնադրությամբ կարգավորվում են Արենի համայնքի զորահավաքային մարմնի խնդիրների, գործունեության, ղեկավարման և ենթակայության, իրավունքների և պարտականությունների հետ կապված հարաբերությունները:
2. Արենի համայնքի զորահավաքային մարմինը ստեղծվում է Արենիի համայնքապետարանում ռազմական դրության պայմաններում զորահավաքային առաջադրանքներ կատարելու նպատակով:
Արենի համայնքի զորահավաքային մարմնի կառուցվածքը և կազմը որոշվում է Արենի համայնքի ավագանու՝ 02.02.2021 թվականի թիվ 018 որոշման թիվ 1 հավելվածով:

II. ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

4. Արենի համայնքի զորահավաքային մարմնի գործունեությունն ուղղված է ապահովելու խաղաղ ժամանակ և Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման կամ դրա անմիջական վտանգի առկայության կամ ռազմական գործողությունների պայմաններում Արենիի համայնքապետարանին վերապահված լիազորությունների իրագործման արդյունավետ կատարմանը:
5. Արենի համայնքի զորահավաքային մարմնի խնդիրներն են՝
   1) Արենիի համայնքապետարանում ռազմական դրության պայմաններում զորահավաքային նախապատրաստության ապահովման կազմակերպումը:
   2) զորահավաքային պլանների համաձայն՝ զորահավաքի ժամանակ զինված ուժերի և այլ զորքերի համալրումն ու նյութատեխնիկական ապահովման կազմակերպումը:
   3) Արենիի համայնքապետարանի գործունեությունը ռազմական դրության փոխադրմանն օժանդակումը:
6. Խաղաղ ժամանակ և Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման կամ դրա անմիջական վտանգի առկայության կամ ռազմական գործողությունների պայմաններում, զորահավաքային մարմնի խնդիրներից բխող գործառույթների շրջանակում՝ Արենի համայնքի զորահավաքային մարմինն իրականացնում է.
   1) տեղական ինքնակառավարման մարմնի գործունեությունը ռազմական դրության փոխադրման, զորահավաքային և քաղաքացիական պաշտպանության պլանների մշակման աշխատանքների մեթոդական, տեղեկատվական և կազմակերպական աջակցությունը և մասնակցությունն այդ պլանների իրագործմանը,
   2) զորահավաքային նախապատրաստության շրջանակներում կազմակերպվող ուսումնավարժական հավաքներին և պարապմունքներին Արենիի համայնքապետարանի մասնակցության նախապատրաստության ապահովումը,
   3) Արենիի համայնքապետարանի կողմից պաշտպանության նպատակով համայնքի վարչական տարածքի և հաղորդակցության ուղիների նախապատրաստման միջոցառումների կատարման ու զինված ուժերի զորահավաքային ծավալմանն աջակցության ապահովման գործընթացին մասնակցությունը,
   4) Արենիի համայնքապետարանում աշխատող պահեստազորայինների ամրագրման աշխատանքների ապահովումը, նրանց զինվորական հաշվառման, պահեստազորային պատրաստության միջոցառումներին, պարտադիր զինվորական ծառայության և զորահավաքային զորակոչերին ներգրավման ուղղությամբ անհրաժեշտ աշխատանքները զինվորական հաշվառում իրականացնող մարմինների հետ,

5) «Պաշտպանության մասին», «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» և «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, դրանցից բխող նորմատիվ իրավական ակտերով համայնքապետարանի համար սահմանված այլ միջոցառումների իրականացման ապահովումը:

III. ԱՐԵՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

7. Արենի համայնքի զորահավաքային մարմինն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Սահմանադրությամբ, օրենքներով և նորմատիվ իրավական այլ ակտերով և Արենիի համայնքապետարանի գործունեությունը ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրման ներքին պլանով:
8. Արենի համայնքի զորահավաքային մարմինն իր գործունեությունն իրականացնում է Արենիի համայնքապետարանի կանոնադրության և համայնքապետարանում համապատասխան պաշտոն զբաղեցնող անձանց պաշտոնների անձնագրերի համաձայն:
9. Արենիի համայնքապետարանը զորահավաքային առաջադրանք կատարող մարմնին ապահովվում է զորահավաքային մարմինների գործունեության համար անհրաժեշտ աշխատանքային պայմաններով, պետական և ծառայողական գաղտնիքին առնչվելու թույլտվության համապատասխան ձևերով:
10. Արենի համայնքի զորահավաքային մարմնի ղեկավարի բացակայության դեպքում նրան փոխարինում է Արենի համայնքի ղեկավարի կարգադրությամբ նշանակված պաշտոնատար անձը:

IV. ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

11. Զորահավաքային մարմինը ղեկավարում է զորահավաքային մարմնի ղեկավարը:
12. Զորահավաքային մարմինը գործում է զորահավաքային մարմնի ղեկավարի և Արենի համայնքի ղեկավարի ենթակայությամբ:
13. Արենի համայնքի զորահավաքային մարմնի ղեկավարը հաշվետու է Արենի համայնքի ղեկավարին:

V. ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

14. Զորահավաքային մարմինների իրավունքներն են՝
   1) Արենի համայնքի զորահավաքային մարմնին վերապահված խնդիրների և գործառույթների իրականացման առնչությամբ կազմակերպել քննարկումներ, հրավիրել խորհրդակցություններ՝ ըստ անհրաժեշտության դրանց մասնակից դարձնելով համապատասխան մարմնի (կազմակերպության) պաշտոնատար անձանց, մասնագետների և փորձագետների, աշխատանքների արդյունքներից ելնելով՝ Արենի համայնքի ղեկավարին ներկայացնել առաջարկություններ.
   2) Արենի համայնքի ղեկավարի համաձայնությամբ հանդես գալ միջգերատեսչական կամ փոխգործակցային մակարդակում՝ որպես Արենիի համայնքապետարանի ներկայացուցիչ.
   3) առաջարկություններ ներկայացնել զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի աշխատանքների կատարելագործման վերաբերյալ.
   4) խաղաղ և ռազմական դրության ժամանակ օրենքով սահմանված կարգով վերահսկել մարմնին ենթակա մարմինների, ստորաբաժանումների զորահավաքային նախապատրաստության, քաղաքացիական պաշտպանության զորահավաքային պատվերների կատարման աշխատանքները.
   5) իր իրավասությունների սահմաններում համակարգել զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի հետ կապված միջոցառումները:
15. Արենի համայնքի զորահավաքային մարմնի պարտականություններն են՝
   1) Արենիի համայնքապետարանում՝ սույն կանոնադրության 6-րդ մասի 3-րդ կետով սահմանված

խնդիրների և դրանցից բխող գործառույթների իրականացումը:

2) ռազմական դրության իրավական ռեժիմի պայմաններում Արենիի համայնքապետարանում՝ սույն կանոնադրության 6-րդ մասի 4-րդ կետով սահմանված խնդիրների և դրանցից բխող միջոցառումների կատարումը:

16. Զորահավաքային մարմնի ղեկավարը պատասխանատու է զորահավաքային մարմնի առջև դրված խնդիրների և դրանցից բխող գործառույթների իրականացման համար:

ԱՐԵՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. ՍԻՄՈՆՅԱՆ